

...

Հայոց լեզուն «եղեռնագարկ».
գիտաժողով լեզվի
ինստիտուտում

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում հունիսի 16-ին տեղի ունեցավ «Հայոց լեզուն՝ եղեռնագարկ» խորագրով գիտաժողով, որին մասնակցում էին ինչպես ակադեմիական, այնպես էլ բուհական համակարգի ներկայացուցիչներ: Զեկուցողներն անդրադարձան թե՛ գրական արևմտահայերենին և թե՛ հայերենի բարբառներին եղեռնի պատճառած կորուստներին ու վնասներին, ներկայացրին կորստի մատնված մի շարք բարբառների (Ակնի, Նիկոմեդիայի, Եվդոկիայի, Ռոդոսթոյի) լեզվական հետաքրքրական իրողություններ: Անդրադարձ եղավ նաև Կ. Պոլսում արևմտահայերենի արդի վիճակին, բնօրրանից կտրված բարբառներին, հուշագրություններում արևմտահայ բարբառների մասին եղած տեղեկություններին և այլն: Փաստվեց, որ եղեռնի պատճառած կորուստները ոչ միայն բեկեցին մեր լեզվի զարգացման բնականոն ընթացքը, այլ նաև զգալի վնաս հասցրին մարդկային լեզվին ու քաղաքակրթությանն ընդհանրապես:

....

«Արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման խնդիրներ»

ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ հուլիսի 29-ից 30-ը ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման խնդիրներ» խորագրով համաժողովը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը: Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ նա համոզմունք հայտնեց, որ մայրենի լեզվի երկու ճյուղերին նվիրված այս գիտաժողովը կնպաստի մեր լեզվի միասնական զարգացմանը, կանոնարկմանն ու գիտական ուսումնասիրությանը, կրթական խնդիրներին վերաբերող նախաձեռնություններին, նոր ծրագրերի առաջադրմանն ու իրագործմանը: «Մենք պարտավոր ենք արևմտահայերենը պահպանել, մեր լեզուն անադարտ պահել և ապահովել հայերենի միասնական զարգացումը՝ իբրև ազգային միասնության պահպանման և պետականության զարգացման կարևորագույն գործոն», - նշեց նախարարը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասա-

րական գիտությունների բա-
ժանմունքի ակադեմիկոս-քարտու-
ղար Յու. Սուվարյանը: Նա կարևո-
րեց համաժողովի դերը հայոց լեզ-
վի երկու ճյուղերի մերձեցմանն
առնչվող խնդիրների լուծման գոր-
ծում: Նշեց նաև, որ այսօր առավել
քան երբևէ օրակարգային է Հայե-
րենի բարձրագույն խորհուրդ
ստեղծելու խնդիրը:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի տնօրեն Վ.
Կատվայանը խոսեց ցեղասպա-
նությունից 100 տարի անց հայոց
լեզվի առջև ծառացած մարտահրա-
վերների մասին: Անդրադառնալով
լեզվի երկու ճյուղերի ներկա վի-
ճակին և առկա խնդիրներին՝ նա
ներկայացրեց ցեղասպանության
հետևանքով և խորհրդային շրջա-
նում Ադրբեջանում հայկական
բարբառների կորստին, լեզվի զար-
գացման ու երկու ճյուղերի մեր-
ձեցման խոչընդոտներին: Վ. Կատ-
վայանը մասնավորապես նշեց, որ
գիտաժողովի նպատակը գրական
լեզվի մեկ միասնական տարբերակ
ունենալը չէ, այլ զարգացման
միասնական հեռանկարի և փոխ-
համաձայնեցված կանոնակար-
գումն է և փոխհարստացման ուղի-
ների մշակումը և դրանց գործա-
դրումը:

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի
ընդհանուր և համեմատական լեզ-
վաբանության բաժնի վարիչ Վ. Գ.
Համբարձումյանը հանգամանալից
վերլուծությամբ անդրադարձավ
գրական արևելահայերենի և արև-
մրտահայերենի տերմինաբանու-

թյան միասնականացման հարցե-
րին:

ԵՊՀ դասախոս Հ. Չոլաքյանը
հանդես եկավ նաև «Գրական հա-
յերենի երկու ճիւղերու մերձեցման
խնդիրները Սփիւռքահայ դպրոցի
համապատասխան փորձի լոյսին
տակ» գեկուցումով: Ներկայացնե-
լով արևմտահայերենի դասա-
վանդմանն առնչվող խնդիրները
Սփյուռքի հայկական դպրոցնե-
րում նա հիմնավորեց բազմամշա-
կույթ և բազմալեզու միջավայրե-
րում ապրող և կրթվող հայ երեխա-
ներին մայրենին արդյունավետ
ուսուցանելու համար որոշակի հա-
յեցակարգ և մեթոդներ մշակելու
անհրաժեշտությունը:

Լեյդենի համալսարանի դասա-
խոս Հ. Մարտիրոսյանը ներկայաց-
րեց իր խոհերը արդի հայերենի
խնդիրների շուրջ:

Անդրադառնալով այն հարցին,
թե արդյոք ազգային միասնության
հարցում էական դեր ունեն մեր
երկու գրական ճյուղերի քերակա-
նական և ուղղագրական տարբե-
րությունները՝ «Հարություն» ֆիլմի
լեզվի օրինակով առանձնացրեց
անհարկի նորաբանություններին և
փոխառություններին՝ առնչվող
որոշ խնդիրներ:

Բանավոր խոսքում արևմտա-
հայերենի և արևելահայերենի բա-
ռագուգորդումների մասին գեկու-
ցումով հանդես եկավ ԵՊՀ դասա-
խոս Ս. Աբաղյանը: Շարժայի
(ԱՄԷ) Օհաննեսեան վարժարանի
ուսուցչուհի Հ. Կազանջյանը ևս
անդրադարձավ արևմտահայերենի
և արևելահայերենի մերձեցման

խնդիրներին՝ ներկայացնելով դասավանդման ընթացքում իր կուտակած փորձը: Քննարկվող խնդիրների վերաբերյալ իր դիտարկումները ներկայացրեց ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի սլետական տեսչության պետ Ս.Երիցյանը:

Համագգային հայ կրթական մշակութային միության «Բագին» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր Հ. Պալանն առաջարկեց հայերենի երկու ճյուղերի մերձեցմանը նպաստող որոշակի քայլեր: Նույն հարցին անդրադարձավ նաև «Մեսրոպեան ուխտ» լեզվապահպանական միության նախագահ Ն. Որբերյանը (ԱՄՆ) և առաջարկեց ստեղծել Համահայկական տերմինաբանական կոմիտե, քննարկել և ի մի բերել ուղղագրության միասնականացման խնդիրները:

Արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման իր տեսլականն ու լուծման ուղիները ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականի գլխավոր խմբագիր Ն. Մկրտիչյանը:

Նա հանգամանալից անդրադարձավ Սփյուռքի տարբեր համայնքներում օտար լեզուների ազդեցությամբ արևմտահայերենի կրած հնչյունական, քերականական փոփոխություններին և կիրառվող օտարաբանություններին: Խոսեց նաև սփյուռքում արևմտահայերեն հրապարակվող լրատվամիջոցների լեզվական խնդիրների, Հայաստանում արևմտահայերենի ուսուցման հարցերի մասին: Ն.

Մկրտիչյանը առաջարկեց Հայաստանում ստեղծել արևմտահայերենով գործող դպրոցներ, իսկ Սփյուռքում՝ լեզվի տեսչությանը համարժեք կառույց, որը կփորձի նորմավորել լրատվամիջոցների լեզուն և աշխատանքներ իրականացնել տարբեր համայնքներում արևմտահայերենի կանոնարկման, տարբերությունների նույնականացման ուղղությամբ:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի աշխատակից Ս. Տիոյանը համաժողովի մասնակիցներին ներկայացրեց բաժնին կից սփյուռքի խմբի ուղերձը Լոս Անջելեսից (ղեկավար՝ Ա. Սարգսյան): Ողջունելով համաժողովը կազմակերպելու նախաձեռնությունը՝ հեղինակներն անդրադառնում են հայոց լեզվի երկու ճյուղերի մերձեցման խնդիրներին ու ուղիներին: Նրանք նշում են, որ մերձեցումը գերազանցապես առնչվում է բառապաշարի ոլորտին, տերմինաբանությանը, ուղղագրությանը և լեզվական այլ իրողությունների՝ համոզմունք հայտնելով, որ գործընթացը պիտի չկայանա լեզվաճյուղերից որևէ մեկի հաշվին: Ս. Տիոյանը ներկայացրեց նաև որոշ դիտարկումներ արևմտահայերենի ուսումնասիրության մի քանի հարցերի վերաբերյալ: Փարիզի «Նոր Յառաջ» թերթի խմբագիր Ժ. Չոլաքեանը հանդես եկավ «Հայերենը ֆրանսերենի շուքին» գեկուցումով անդրադառնալով տարբեր երկրներում այլ լեզուների հետ հայերենի ազդեցության և փոխազդեցության

խնդիրներին:

Արևմտահայերենի պահպանության, գործառության և կանոնարկման խնդիրներին, ուղղագրության հարցերին, հանրակրթական դրարոցներում արևմտահայերենի դասավանդման մարտահրավերներին վերաբերող զեկուցումներով հանդես եկան ԵՊՀ պրոֆ. Լ. Եզեկյանը հայոց լեզվի ամբիոնի դասախոս Ռ. Համբարձումյանը, ամբիոնի ասպիրանտ Մ. Շահումյանը, ԵՊՄՀ «Սփյուռք» գիտակրթական կենտրոնի ղեկավար Ս. Դանիելյանը, կենտրոնի աշխատակից Ք. Աբրահամյանը, ՀՊՄՀ հայոց լեզվի տարական ուսուցման ամբիոնի վարիչ Ա. Գալստյանը, լեզվաբան Դ. Գյուրջինյանը, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ Գ. Գևորգյանը, Սորբոնի համալսարանի պրոֆ. Հ. Փանոսյան-Գալֆայանը, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ Հ. Սուքիասյանը, Արցախի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի դասախոս Լ. Մարգարյանը, «Այլ կերպ» խաղի հեղինակներ Է. Մելիքյանը, Ա. Հակոբյանը և Ս. Խաչատրյանը, որոնք պատկերաշարով ներկայացրին մտավոր-ժամանցային խաղերի միջոցով հայերենը պահպանելուն և կիրառելուն ուղղված իրենց ծրագիրը: Ելույթ ունեցան նաև սփյուռքի կրթօջախների ուսուցիչները՝ Փարիզի «Մկնիկ» աշխատանոցի տնօրեն Ա. Գրիգորյանը («Արևելահայերենի և արևմտահայերենի միատեղ և գուգահեռ շփումն ու զարգացումը») և Լիբանանի Զմմառի Դպրեվանքի և Ընծայարանի ուսուցչուհի Ս. Փի-

լավճյանը («Միթե վերջին պոյետն եմ ես». մայրենին անադարտ պահել»): Զեկուցումների շարքը եզրափակեց ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատակից Ա. Քարտաշյանը՝ ներկայացնելով «Դիտարկումներ արդի արևմտահայ իրականության մեջ գործավող անձնանունների վերաբերյալ» զեկուցումը:

Մասնակիցների հարցերին պատասխանեցին Սփյուռքի նախարարի տեղակալ Ս. Սրապիոնյանը և ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը:

Համաժողովի երկօրյա աշխատանքն ամփոփեց ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը՝ նշելով, որ համաժողովը հայոց լեզվի երկու ճյուղերի մերձեցմանը միտված թերևս առաջին գործնական քայլն էր, իսկ արված դիտողությունները և առաջարկությունները կարող են առաջադրել խնդիրների լուծման նոր ուղիներ:

...

Սեմինար ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում

Փետրվարի 8-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ սեմինար, որ նվիրված էր սփյուռքագիտությանը, Սփյուռքի հայագիտական կենտրոններին, Արևմտյան Հայաստանում հայերենի գոյատևմանն առնչվող հարցերին: Զեկուցումով հանդես եկան հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ Գ. Մխի-

թարյանը, ավագ գիտաշխատողներ Ս. Տիոյանը և Հ. Մեսրոպյանը:

Անդրադառնալով Սփյուռքի հայագիտական կենտրոնների գործունեությանը՝ Գ. Մխիթարյանը ներկայացրեց դրանց կազմակերպական ու կառուցվածքային առանձնահատկությունները, ստեղծման հիմքերը, հաստատությունների առջև ծառացած խնդիրները, ինչպես նաև նրանց հետ համագործակցության հնարավորությունները:

Ըստ զեկուցողի՝ հիշյալ կենտրոնները, գիտահետազոտական ու կրթական հաստատությունները ծավալուն գործունեություն են իրականացնում հայապահպանության, հայոց լեզուն և հայ գրականությունը, հայ ժողովրդի պատմությունը և մշակույթը պահպանելու և տարածելու ուղղությամբ: Ներկայումս աշխարհի տարբեր երկրներում կան ինը տասնյակից ավելի նման կառույցներ, որոնց մի մասը հայագիտական ինքնուրույն կենտրոններ են, իսկ մյուսները գործում են այլ հաստատությունների (ինչպես հայկական, այնպես էլ օտար) կազմում:

Ս. Տիոյանի զեկուցեց վերջերս Սփյուռքի նախարարությունում կայացած ժողովի ընթացքում իռլանդական Diaspora Matters կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն Քինգսլի Այքինսի կարողացած դասախոսության մասին նվիրված սփյուռքի առանձնահատկություններին (տարբեր ժողովուրդների դեպքում). ներկայումս աշխարհում մեծ տարածում ունե-

ցող այդ իրողության ձևավորման և ձևափոխումների պատմությանը, հայրենիքի հետ սփյուռքի կապին, դերին և այլն: Ինստիտուտի գիտաշխատողներին փոխանցելով հիշյալ դասախոսությունից ստացած իր տպավորությունները՝ զեկուցողը որոշ մանրամասներ ներկայացրեց իռլանդացի սփյուռքագետի հետազոտություններից:

Հ. Մեսրոպյանը տեղեկություններ հաղորդեց Թուրքիայում հայերենի վիճակի և հայոց լեզվի ուսուցման խնդիրների վերաբերյալ: Նա փաստեց, որ Արևմտյան Հայաստանում շարունակում են ապրել հազարավոր հայեր, որոնք, թեև կորցրել են մայրենին ու դավանափոխ եղել, սակայն պահպանել են իրենց ազգային ինքնագիտակցությունը և հնարավորության դեպքում աստիճանաբար կարող են վերադառնալ իրենց բնիկ երկրանը, արմատներին: Նշվեց նաև, որ որոշ տարածքներում այս կամ այն չափով ու եղանակով հայերենը այնուամենայնիվ դեռևս գործառում է:

Զեկուցողները պատասխանեցին առաջադրվող հարցերին, իսկ վերջում եղավ մտքերի փոխանակում, ծավալվեց քննարկում:

...

«Հայոց լեզվի ուսումնասիրության արդի հիմնահարցեր» խորագրով հանրապետական խորհրդակցություն

Փետրվարի 19-ին ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ

Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Մայրենիի օրվան նվիրված «Հայոց լեզվի ուսումնասիրության արդի հիմնահարցեր» խորագրով հանրապետական խորհրդակցություն, որին մասնակցում էին ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու. Սուվարյանը, բուհերի հայերենագիտական ամբիոնների վարիչներ և աշխատակիցներ, հայագիտական կենտրոնների ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ Վ. Կատվալյանը: Նա շնորհակալություն հայտնեց հանրապետության տարբեր մարզերից և Երևանից խորհրդակցությանը մասնակցող լեզվաբաններին: Նշվեց, որ Մայրենիի տոնին Սփյուռքի նախարարությունը հաղորդել է համահայկական հնչեղություն. Հայրենիքում և Սփյուռքում կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ, լեզվաբանները հանդես են գալիս ելույթներով և ասուլիսներով, արժարժվում են լեզվի պահպանության վերաբերյալ հրատապ հարցեր:

Արդեն մի քանի տարի է, ինչ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ կազմակերպում է գիտաժողովներ, որոնց ընթացքում հնչում են գրական լեզվի կանոնարկմանը, լեզվաքաղաքականության խնդիրներին առնչվող հարցեր, լսվում են հայերենի երկու

ճյուղերի զարգացմանը և մերձեցմանը վերաբերող հետաքրքիր գեկուցումներ, ծավալվում են նպաստավոր քննարկումներ, հրատարակվում են գիտական գեկուցումների ժողովածուներ:

Լեզվի ինստիտուտում ստեղծվել է արևմտահայերենի ուսումնասիրության բաժին, որն ունի հետագա աշխատանքների որոշակի ուղղվածություն:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը: Նա ևս լեզվաբաններին շնորհակալություն հայտնեց շահագրգիռ մոտեցման և այն առողջ, անկեղծ մթնոլորտի համար, որ նրանք ձևավորել են հայոց լեզվին առնչվող խնդիրների շուրջ: Նախարարն անդրադարձավ կառավարությանն առընթեր լեզվի բարձրագույն խորհրդի ստեղծմանը, որը Սփյուռքի նախարարության, Գիտությունների ազգային ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի նախաձեռնությամբ և ջանքերով կյանքի է կոչվում, և լեզվաբանները պետք է իրենց ակտիվ մասնակցությունն ունենան, որպեսզի այն ըստ ամենայնի իրականացնի իր առաքելությունը:

Սփյուռքի նախարարը կարևորեց հայոց լեզվի երկու ճյուղերի համամասնական զարգացումը: Նա մասնավորապես ընդգծեց հետևյալը. «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներում ընդգրկված էր նաև արևմտահայերենի պահպանման և զարգացմանն ուղղված միջոցառումների ծրագիր, քանի որ եղեռնահար

էր եղել նաև հայոց լեզուն, կրել անասելի կորուստներ, և 100 տարի հետո մենք համատեղ ուժերով պետք է վերականգնենք մեր կորսված լեզվական արժեքները»:

Կարևոր խնդիր դիտվեց Սփյուռքի դպրոցների համար դասագրքերի ստեղծումը: Սիրիայում կատարված դեպքերի հետևանքով հայենիքում հանգրվանած մեր հայրենակիցների մի մասը ներգրավվում է նաև արևմտահայերենի դասավանդման և հետազոտությունների ոլորտում. դրա վառ օրինակը Հ. Չոլաքյանն է, որ աշխատանքի է անցել Լեզվի ինստիտուտում: Վերջում Հ. Հակոբյանը շնորհավորեց ներկաներին Մայրենիի օրվա առթիվ և հրավիրեց նախարարության նախաձեռնությամբ փետրվարի 21-ին կայանալիք ավանդական միջոցառմանը, որին կմասնակցի նաև ՀՀ վարչապետ Հ. Աբրահամյանը:

«Հայոց լեզվի առօրյա կիրառումն անգամ պետք է լինի տոն, որ միշտ յուրաքանչյուրի հետ է, իսկ փետրվարի 21-ը դարձնենք սպասված, իսկական տոն», - եզրափակեց իր ելույթը նախարարը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Յու. Սուվարյանը: Նա ևս անդրադարձավ Լեզվի բարձրագույն խորհրդի ստեղծմանը նշելով, որ դա նշանավոր լեզվաբան Գ. Ջահուկյանի մեծ ցանկությունն էր: Նա խոսեց դասագրքերի կատարելագործման, ուսուցիչների որակավորման բարձրացման և այլ խնդիրների մասին:

Ելույթներով հանդես եկան բուհերի ներկայացուցիչներ, անվանի

լեզվաբաններ, մայրենիով նախանձախնդիր այլ մասնագետներ: Նրանք ներկայացրին հանրապետության գիտակրթական հաստատություններում մայրենիի հետազոտության տարբեր ուղղությունները և եղանակները, իրենց կողմից իրականացված աշխատանքները, հետազոտություններն ու պաշտպանված գիտական թեզերը, հրատարակված աշխատությունները, առկա խնդիրներն ու հիմնահարցերը, նախանշեցին դրանց լուծման ուղիներն ու մեթոդները: Տեղի ունեցավ քննարկում հայոց լեզվի ուսումնասիրությանն առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ: Նշվեցին առկա խնդիրները, այլև գիտական հաստատությունների միջև կապերի ամրապնդման հնարավորությունները:

...

Հայերենի դասավանդման վիճակը Մերձավոր Արևելքի հայկական համայնքներում

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում փետրվարի 26-ին տեղի ունեցած գիտական սեմինարի թեման Մերձավոր Արևելքի երկրներում հայերենի դասավանդման վիճակն էր: Զեկուցումով հանդես եկավ լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի ավագ գիտաշխատող Հ. Չոլաքյանը: Նա, ընդգծեց Մերձավոր Արևելքում հայկական դպրոցների ազգապահպան մեծ նշանակությունը, մանրամասն ներկայացրեց դրանց ստեղծման հանգամանքները և

գործունեության պայմանները, շրջանի տարբեր երկրներում հայ դպրոցի կրած կազմակերպական և բովանդակային փոփոխությունների փուլերը, արևմտահայերենի պահպանման և զարգացման գործում անուրանալի դեր ունեցող կրթական այդ հաստատությունների առջև ժամանակի ընթացքում ծառացած մարտահրավերները:

Այնուհետև, զեկուցողը սեղմ վերլուծությամբ անդրադարձավ տարածաշրջանի հայկական համայնքներում հայոց լեզվի դասավանդման հարցերին, տարածաշրջանում հայերենի վիճակին, համայնքների և կրթական հաստատությունների առջև ներկայումս ծառացած խնդիրներին:

Ընդգծվեց, որ Մերձավոր Արևելքի հայկական համայնքները մեծ դեր են խաղացել նաև ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում և այլ երկրներում հայ դպրոցի հիմնադրման և զարգացման գործում: Նշվեց, որ հատկապես Լիբանանի և Սիրիայի հայ համայնքները՝ իրենց կրթական հաստատություններով, ինչպես նաև Եգիպտոսի, Հորդանանի, Կիպրոսի, Քուվեյթի հայկական դպրոցները շարունակում են մնալ արևմտահայերենի ուսուցման և պահպանման ամենակարևոր կենտրոնները:

Վերջում ներկաները, որոնց թվում էին նաև ՀՀ սփյուռքի նախարարության ներկայացուցիչներ, դիտարկումների և հարցուպատասխանի միջոցով ամբողջացրին թեմայի քննարկումը:

...

«Հերացի» ավագ դպրոցի սաները լեզվի ինստիտուտում

Մարտի 4-ին Երևանի պետական բժշկական համալսարանի «Հերացի» ավագ դպրոցի 10-րդ և 11-րդ դասարանների մի խումբ աշակերտներ հայոց լեզվի և գրականության ուսուցիչների հետ հյուրընկալվեցին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում՝ ներկայացնելու իրենց ինքնուրույն հետազոտական աշխատանքները:

Լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը, ողջունելով նրանց մուտքը ինստիտուտ, իր ելույթում նշեց, որ հետազոտական աշխատանքը ամենահաճելի աշխատանքն է, և ամեն հետազոտող պետք է քաջ գիտակցի, որ իր գործով ծառայություն է մատուցում իր հայրենիքին և ժողովրդին: Մեկ անգամ ևս անդրադարձ եղավ հայերենն անադարտ պահելու, մշակելու և զարգացնելու կարևորությանը: Նաև նշվեց, որ այս առումով Լեզվի ինստիտուտը համագործակցում է ՀՀ սփյուռքի նախարարության հետ, որը, ի դեմս նախարար Հ. Հակոբյանի, մեծապես շահագրգիռ է հայերենի խրնդիրներով թե՛ հայրենիքում և թե՛ Սփյուռքում:

Այնուհետև ելույթ ունեցավ ՀՀ սփյուռքի նախարարության ներկայացուցիչը՝ գիտակրթական բաժնի պետ Ս. Համբարյանը: Նա աշակերտներին փոխանցեց նա-

խարարի ողջույնի խոսքը, որում մասնավորապես կոչ էր արվում հայ դպրոցականներին՝ լինել հայոց լեզվի պահապանը և տարածողը:

Աշակերտները ներկայացրին իրենց ուսումնասիրությունները, որոնք նվիրված էին հայերենի, հայ գրականության և հայ փիլիսոփայական մտքի ամենատարբեր հարցերի: Ձեկուցողները ինստիտուտի գիտաշխատողների կողմից արժանացան դրվատանքի և խրախուսանքի:

Իրենց դիտարկումներն արեցին ինստիտուտի աշխատակիցներ Լ. Հովսեփյանը, Ռ. Թոխմախյանը, Ն. Սարգսյանը, Գ. Մխիթարյանը, ԵՊԲՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ Հ. Սուքիասյանը:

Հանդիպման վերջում Սփյուռքի նախարարության և Լեզվի ինստիտուտի կողմից գրքեր նվիրվեցին զեկուցումով հանդես եկած աշակերտներին, հայոց լեզվի և գրականության ուսուցիչներին:

...

«Ջահուկյանական ընթերցումներ»
միջազգային գիտաժողով. 8-10
հունիսի 2016 թ.

Արդեն 11-րդ տարին է, ինչ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը կազմակերպում է գիտական ընթերցումներ, որոնք վերաբերում են հայերենի պատմության և կառուցվածքի տարբեր հարցերի, ընդ որում ոչ միայն հանրապետության, այլև արտասահմանյան ուսումնասիրողների մասնակցությամբ:

Հունիսի 8-10-ին յուրաքանչյուր օր երկուական նիստով զեկուցումներ կարդացվեցին ավելի քան երեք տասնյակ թեմաներով, ընդ որում բավականին հատկանշական էր երիտասարդ ուսումնասիրողների մասնակցությունը՝ ոչ միայն լեզվի ինստիտուտի, այլև հանրապետության, մասնավորապես Երևանի, Վանաձորի, Գորիսի, Իջևանի, Արցախի բուհերի հայագետ հետազոտողներ:

Ձեկուցումները տարբեր էին իրենց թեմատիկայով, ընդգրկում էին հայերենի ուսումնասիրման տարբեր բնագավառները:

Ընդհանուր և համեմատական լեզվաբանության առանձին հարցերի շուրջ զեկուցումներով հանդես եկան Վ. Համբարձումյանը («Հայերենի տվյալների կարևորությունը հնդեվրոպասեմական լեզվական առնչությունների ուսումնասիրության հարցում»), Դ. Գյուլգատյանը («Քերականական կարգերի սահմանակցությունը»), Հ. Ջաքարյանը («Լեկ, փոկ և թաղիք բառերի ստուգաբանությունը»), Ս. Ավետյանը («Ավանդական և արդի հնդեվրոպաբանական մոտեցումների որոշ առանցքային տարբերությունների շուրջ»), Հ. Մելքոնյանը («Հավելադրումը և զեղչումը որպես հակոտնյա միտումներ. դրսևորումները հայերենում»):

Ջուգադրական լեզվաբանության բնագավառին վերաբերող թեմաներ ևս շոշափվեցին, որոնք հիմնականում հարցադրումներ էին և ունեին ակնարկային բնույթ: Նման զեկուցմամբ հանդես եկան

Թ. Ամրյանը («Եզդիների կրոնի բնիկ եզրաբանության շուրջ»), Ա. Խաչատրյանը և Ա.Բարխուդարյանը («Անձնանունների հոլովման յուրահատկությունները Նոր կտակարանի գրաբար և հին հունարեն տարբերակներում») և Գ. Գրիգորյանը («Խոսակցական և գրական լեզուների տեմպի համեմատական քննություն»):

Հայոց լեզվի պատմությանը վերաբերող հարցերի շուրջ ելույթները բազմազան էին, հետաքրքիր զեկուցումներ ունեցան Ք. Հարությունյանը («Դարձվածային միավորները Փ.Բուզանդի «Պատմութիւն հայոց» երկում»), Ս. Գրիգորյանը («Միջոց բառը գրաբարյան դարձվածային միավորներում»), Ս. Գրիգորյանը և Ն. Պարոնյանը («Ստուգաբանական դիտողություններ Վ. Արևելցու ճառերում»), Ն. Դիլբարյանը («Խեթալուվական արմատները հայկական տեղանուններում»), Հ. Թադևոսյանը («Իմաստային նոր դրսևորումներ «Գիրք վաստակոց»-ում»), Ն. Պողոսյանը («Նոր ձևույթների առաջացումը և գործածությունը հետգրաբարյան շրջանում»):

Մեծ թվով զեկուցումներ նվիրված էին հայերենի բարբառներին, ընդ որում հիմնականում նյութի ավանդական վերլուծության սկզբունքներով: Ուշագրավ թեմաներով հանդես եկան Վ. Կատվայանը («Բայազետի և մերձավոր բարբառների հիմնական տարբերությունները և ընդհանրությունները»), Զ. Բառնասյանը («Կայուն բառակապակցությունները հայե-

րենի բարբառներում»), Ժ. Միքայելյանը («Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակները հայերենի արևմտյան խմբակցության մի քանի բարբառներում»), Հ. Խաչատրյանը («Աղբ և աղբանոց հասկացությունների բառային դրսևորումները բարբառային հայերենում»), Ս.Միքայելյանը («Արաբական փոխառությունները Վանի բարբառի խոսվածքներում»), Ս. Մանուչարյանը («Բարբառային իրողությունները Ս. Այվազյանի «Ճակատագիրն հայոց» և «Խնձորեսկ» վեպերում»):

Ժամանակակից գրական հայերենի քերականական կառուցվածքի, նրա կանոնարկման, այլև գեղարվեստական ոճի հարցերին անդրադարձ եղավ մի քանի զեկուցումներում: Եղան նոր հարցադրումներ, առաջարկվեցին քննության այլ մոտեցումներ: Նման դրույթներով հանդես եկան Ն. Սարգսյանը («Խոսակցական լեզվի նորմերի խնդիրը»), Ռ. Դոխոյանը («Վարքի բայերի իմաստային դասակարգումը արդի հայերենում»), Վ. Ներսիսյանը («Հայերենի *համաձայնել* և *համաձայնվել* բայերի իմաստային տարբերակման հարցի շուրջ»), Ա. Մկրտումյանը («Դարձվածային նորաբանությունները և հոմանշային գործածությունները Վ. Թոթովենցի «Բաց կապույտ ծաղիկներ» պատմվածքում»), Ա.Ամիրխանյանը («Գառ բառով հայերեն բուսանունները») և այլն:

Հայերենի գրական երկու տարբերակների արևելահայերենի և

արևմտահայերենի որոշ հարցերի անդրադարձան Ռ. Թոխմախյանը և Ս.Տիոյանը («Ժխտման քերականական կարգը արևմտահայերենում և արևելահայերենում»), Ս. Ղուկասյանը («Այո-ոչ հարցումները Մատթեոսի արևելահայ և արևմտահայ Ավետարաններում»):

Հայ քերականագիտության առանձին խնդիրների վերաբերող զեկուցումներ կարդացին Հ. Հարությունյանը և Լ. Պետրոսյանը («Բառերի կապակցելիության դիտարկումները գրաբարի քերականության պատմության մեջ (XVII-XIX դդ.)»), Տ. Սիրունյանը («Հոսի. Քոնեցու քերականության սահմանումների լատիներեն նախօրինակները»):

Բնագրի (տեքստի) վերլուծության առանձին հետաքրքիր հարցեր շոշափեցին Ա. Բարսեղյանը («Նախադասությունների կապակ-

ցության նյութական բառական միջոցները տեքստում») և Ա. Սարգսյանը («Անձնանունները գավեշտի հենք հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և գվարձախոսություններում»):

Այս գիտաժողովում արժանիորեն կարևոր էին արևմտահայերենի և նրա ուսուցման խնդիրներին վերաբերող զեկուցումները: Կոնկրետ թեմաներով հանդես եկան Լ. Նազարյանը («Հալեպահայ դպրոցների կրթական համակարգը և հայեցի դաստիարակությունը»), Յ. Չոլաքեանը («Ընթացակցական դերբայի խնդիրը արևմտահայերենի մեջ»), Ա. Սարգսյանը («Արդի արևմտահայերենի գործնական բառարանի սկզբունքները»), Ա. Ֆշնկջյան («Արևմտահայերենի խոնարհման համակարգը պատմական զարգացման ընթացքում»):